*Առաջնորդարանի դրան դուրսի աջ կողմը, Լիստրայի Մարտիրոս քահանայի տապանաքարին պատուանդանին վրայ կայ հետեւեալ արձանագիրը՝*

*19*.- 1708.— Ցերկրէն *ԿԱՐՆԵՑԻ*, եւ որդեգիր *ՄԸՁՐԱԻ* ?... կենաց սորին, աստ ի *ՀԱԼԱՊ* մեծ քաղաքին Հայոց ազգին. ՌՃԾԷ (1708):

*20*.- 1774.— Այս է տպան հնգստեն
հնգցել *ՏՐ ՍԱՀԱԿԻ* որդի
հնգուցել *ՏՐ ԱԻԵՏԻՍԻՆ*
որ հնգցել է ի Քս ի թւն
Հայոց ՌՄԻԳ (1774) ի օգի ԺԵ:

*Ս. Թառամնից մուտքի կամարին տակ՝*

*21*.- 1781.— Այս է տապան հանգստեան հանգուցեալ *ՏԷՐ ԳԷՈՐԳԻ* որդի, *ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԻՆ*, որ հանգեաւ ի Քս. թ. Հայոց 1230 (1781):

*22*.- 1781.— Այս է տպն հնգս
տեն հնգուցել *ՏՐ ԳԷ*
*ՈՐԹԻՆ* որդի *ՏՐ ՍԱՐԳՍԻՆ*
որ հնգեւ ի Քս
թւն հայոց ՌՄԼ (1781)
Յունիսի ԻԳ ին:

*Ս. Թառամնից մատրան մէջ կայ 119×56 սնթմ. մեծութեամբ գեղին կճեայ քարէ տապանաքար մը, հետեւեալ արձանագրով՝*

*23*.- 1786.— Այս է տպան հնգ
ստեն. *ԲԸՐԻՑԻ ՏԷՐ*
*Պ(Օ)ՂՈՍԻ* որդի. *ԲԸՐԻՈԻ*
*ԱՌՋՆՈՐԴ ԴԷՎՈՐԳ*
*ՎԱՐԴՊԵՏԻՆ*. որ հնգ
եաւ. ի Քս թվին
ՌՄԼԵ (1786) ին:

*24—26*.- 1786.— Այս է տապան հանգստեան երից եղբարցն ի Քս
*ՏՈՒՆ ՅԱԿՈԲԱՅ ՍԱՆՈՍԵԱՆԻ* թւ հա
յոց 1235 (1786) եւ դար
ձեալ որդոյ *ՏՈՒՆ*
*ՄԻՔԱՅԷԼԻ* ի թւ
1260 (1811) եւ որդոյ *ՏՈՒՆ*
*ՄԻՔԱՅԷԼԻ* 1293 (1844),

*Առաջնորդարանի դրան աջ կողմը՝*

*27*.- 1808.— Այս է տապան հանգուցեալ
*ՏԷՐ ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԺԱՊԵՏ ՔԱ-*
*ՀԱՆԱՅԻՆ ԼԻՒՍՏՐԱՑԻ*,
որ հանգեաւ ի Տէր
1808 Յուլիսին:

*Ս. Թառամնից մատրան մէջ, 72×41 սնթմ. մեծութեամբ գեղին մարմարինէ տապանաքարի վրայ՝*

*28*.- 1837.—
փայլեալ. ի տապան. րաբունոյ մեծի
Գերապանծ. անեղ. գերազան. *ԴԻՏԻ*.
Երանեալ. *ՄԱՐԿՈՍ. ԵՊԻՍԿՈՊՈՍԻ*.
ի վեմիս. եդեալ. յաւիտեան. հանգչի.
ի թւ. սոմարի. Հայկազան սեռի.
Հազար. երկ. է. ր եւ ութսուն եւ վեցի,
Ամսեանն. Յուլիսի աւուր հնգեկի.
Տոնի հօր մերոյ Սբ Լուսաւորչի:

*Ս. Թառամնից ձախ սիւներէն մէկուն վըրայ 130×101 մեծութեամբ գեղին կճեայ քարի վրայ, ո՛չ միակտուր:*

*29*.- 1840.— *ԳԷՈՐԳ ԵՐԷՑ ՏՐ ԳԷՈՐԳԵԱՆ*
շինեաց զարձան ընտիր կնեան
Սբ յիշատակ մնալ ինքեան
լիցի արժան առ տր յիշման
թվ Հյց ՌՄՁԹ ին (1840):

*30*.- 1843.— Այս է տապան հանգստեան ի Քս Ես Ներկարար *ՏԵՍԱՌՆ ՍԱՐԳԻՍԻ*
*ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ* ի թւ 1843
եւս եւ նորին որդի *ՏՐ ԽԱՉԱՏՈՒՐ*
1879:

*Ս. Թառամնից մատրան մէջ՝*

*31*.- 1848.— ի թվին 1848
հանգչի յայս տապան
փրկչին պաշտօնեայն
*ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ*
Առաջնորդ *ԵԴԵՍԻՈՅ*:

*Կամարի սիւնին վրայ՝*

*32*.- 1857 Յուլ. 17
Ինձ *ՎԱՐՎԱՌԻՍ* որ *ԱՐՍԼԱՆԵԱՆ*
Հարաւ սլաք մահու դաժան
մինչ էր հասակս երեք ամեան
իջի ննջել յայսմ դամբան: